ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑԻՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ

Սեպտեմբերի 19-ին Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն այցելեց Գյումրի՝ օրհնելու երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի անունը կրող վերակառուցված դպրոցը, որը գտնվում է վերջերս Վեհափառ Հայրապետի անվամբ վերանվանված փողոցում:

1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո այցելելով Գյումրի, երջանկահիշատակ Հայրապետը որոշեց վերականգնել ավերված դպրոցի շենքը՝ վերականգնման աշխատանքները հանձնարարելով Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Հայ Օգնության Ֆոնդին: Վերջինս էլ ամերիկահայ Գևորգ Հովնանյանի բարերարությամբ վերականգնեց դպրոցի շենքը: Եվ ահա, ինչպես նշեց ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, կատարվեց Վազգեն Ա Կաթողիկոսի կամքը:

Վազգեն Ա Կաթողիկոսի համար հոգեհանգստյան աղոթք անելուց հետո, Նորին Սրբությունը շնորհավորեց քաղաքային իշխանություններին, ուսուցիչներին և աշակերտներին դպրոցի կառուցման առթիվ:

«Աստծու գաղափարը, Ավետարանի ճշմարտությունները, Եկեղեցու շարականները, մեր հայրերի աղոթքները պիտի հնչեն այս դպրոցի երեխաների շուրթերով», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով կենդանի պահել «գիտության, ազգային պատկանելիության, եկեղեցական նախանձախնդրության զգացմունքները», առանց որի դպրոցը կդառնա անարժեք: Բացման արարողությանը ներկա էին նաև տեր և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանները:

Նույն օրը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ բացվեց նաև Գյումրիի քաղաքային պուրակը: Այնուհետև Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ցոր Վերք Սբ. Աստվածածին եկեղեցի: Գոհաբանական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց ներկա հավատացյալներին: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Ծիրակի թեմի գործունեությունը և հայտնեց Ազատանի նոր եկեղեցու կառուցման մասին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 20-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Ստեփանավան՝ այս անգամ օրհնելու Սբ. Գրիգոր Լուսավորչի անունը կրող դպրոցի նորակառույց շենքը: Դպրոցի ներսում կառուցված է նաև մատուռ, որտեղ Վեհափառ Հայրապետը կատարեց առաջին աղոթքը:

Ստեփանավանի դպրոցի կառուցումը նույնպես իրականացվել է երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի ցանկությամբ: Այս անգամ դպրոցի շինարարական աշխատանքներն իրականացվել է Հայաստանյայց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի կողմից: Ինչպես հայտնեց թեմի առաջնորդ Վաչե արք. Հովսեփյանը, թեմի ջանքերով կահավորվել է նաև դպրոցը: Առաքվել է 750 սեղան, 20 համակարգիչ, երկու կոնտեյներ դպրոցական գույք: Ըստ Վաչե սրբազանի, այլ առարկաների հետ մեկտեղ, դպրոցի 700 աշակերտները կստանան նաև քրիստոնեական դաստիարակություն: Ինչպես

ՇՂԳԻՈՆՈՔ ՆԱԶՂՈՆՆԵՄՍԿ ՇՈՒՍՑՈՇ
ՎՑՍՍԼՆ ՑԵՎՍՍՈԿՈՄՍՍՂ ՎՂՈՒՈՂՈՓՁՏՈ Ֆ ՈՒՍԱՏԿ ՇՏՁԼՈՄԵՈԷ ՍՈՓՈԷՁԻ

տեղեկացրեց Ստեփանավանի քաղաքապետ Ռոմեն Բաղրամյանը, ի երախտագիտություն ցուցաբերած օժանդակության, դպրոցի մարզադահլիճը կկոչվի Վաչե արքեպիսկոպոսի անունով: Վաչե սրբազանին հանձնվեց նաև դպրոցի խորհրդանշական բանալին:

«Ծունկի եմ գալիս Աստծու առաջ և ձեր բոլորի անունով փառք և գոհություն եմ ընծայում Աստծուն, որովհետև այս ամիսը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի պատմության մեջ բացառիկ ամիս էր», - գոհությամբ նշեց Նորին Սրբությունը՝ հիշատակելով Հյուսիսային Կովկասում սեպտեմբերին օծված երեք նոր եկեղեցիներն ու նույն ամսում Հայաստանում բացված երեք նոր դպրոցները:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ